ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 91-Ա

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 52-Ա որոշումը և Լեռնանիստ համայնքի դրամական օգնություն տրամադրող հանձնաժողովի 2018 թվականի օգոստոսի 23-ի թիվ 7 արձանագրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին տրամադրել դրամական օգնություն, համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2018 թ. օգոստոսի 24
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 92 Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2387 Ն որոշմամբ հաստատված կարգի 29, 48 և 51-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2018 թվականի օգոստոսի 22-ի վկայագիրը (գրանցամատյանում գրանցված N 1547), հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել ժառանգորդ Սարիբեկ Տիգրանի Հարությունյանի (ծնված 1946 թվականի մարտի 12-ին) դիմումը , հաշվի առնելով այն, որ Սարիբեկ Տիգրանի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Լեռնանիստ համայնքի 1-ին փողոց թիվ 22 հասցեում գտնվող 0,25947 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում /կադաստրային ծածկագիր 07 033 0086 0008/ մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված շինությունների (անասնաշենք 11 քմ արտաքին մակերեսով, հացատուն 5,90քմ արտաքին մակերեսով և ինքնակամ բացված պատուհանը) պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չէ առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունքը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Օրինականացնել Սարիբեկ Տիգրանի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Լեռնանիստ համայնքի 1-ին փողոց թիվ 22 հասցեում գտնվող 0,25947 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում / կադաստրային ծածկագիր -07-033-0086-0008/ մինչև 2001

թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված անանձնաշենք 11 քմ արտաքին մակերեսով, հացատուն՝ 5,90քմ արտաքին մակերեսով և ինքնակամ բացված պատուհանը:

2. Քաղաքացի՝ Սարիբեկ Տիգրանի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիր- 07-033-0086-0008) Լեռնանիստ համայնքում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք՝ 1-ին փողոց թիվ 22 :

3. Հաշվի առնելով , որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 18թ. օգոստոսի 28
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 93-Ա

ՍԱՐԻԲԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ժառանգորդ Սարիբեկ Տիգրանի Հարությունյանի (ծնված 1946 թվականի մարտի 12-ին) դիմումը և ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 26-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2018 թվականի օգոստոսի 22-ի վկայագիրը (գրանցամատյանում գրանցված N 1547). նկատի ունենալով այն հանգամանքը, որ Սարիբեկ Հարությունյանին պատկանող հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակույթային հողերի պահպանման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմաներին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ճանաչել Սարիբեկ Տիգրանի Հարությունյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-033-0086-0008 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,25947 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրա կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Հողամասի սահմանները որոշվում են <<ՊԻՌԱՄԻԴԱ>>ՍՊԸ- ի կողմից չափագրված և Լեռնանիստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

20 18 թ. օգոստոսի 28
գ.Լեռնանիստ